ՔԱՐՈԶԽՕՍԱՎԿԱՆ

Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՈՆԻ ԵՒ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(25 դեկտեմբեր, 2012)

Սիրելի քրիստոնյա հայորդիներ,

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում ցնծության եւ ոգեւորության օր է: Այսօր Եկեղեցին տոնում է Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակը: Տարվա ընթացքում հավատացյալների բազմությունը մեծ հուզումով է պատրաստվում այս պահին, մանավանդ եկեղեցական համայնքներում եւ հոգեւոր կրթական մեր հաստատություններում:

Ս. Ստեփանոսը քրիստոնեական Եկեղեցու առաջին մարտիրոսն է. շատ բանով է քրիստոնեությունը նրան պարտական: Նրա հավատքի ոգին դարեր շարունակ ներշնչել է քրիստոնյաներին՝ անդավաճան մնալու իրենց կոչմանը: Նրա հոգեւոր քաջության օրինակով քրիստոնյաների դեմ հալածանքների ժամանակ շատ քույրեր եւ եղբայրներ են իրենց արյամբ վկայել հանուն հավատի: Հայ Առաքելական Եկեղեցին՝ մանավանդ, որ դարեր շարունակ դիմակայել է այդ հալածանքներին, ընդհուպ մինչեւ քսաներորդ դարասկիզբը՝ յուրահատուկ բարեպաշտություն է զարգացրել Ս. Ստեփանոսի հիշատակի հանդեպ: Նրա դերը քրիստոնեության տարածման եւ հաղթանակի գործում այնքան խորն է գնահատված Հայոց Եկեղեցում, որ մեր բարեպաշտական մտածողության մեջ սրբոց դասում երրորդ տեղն է հատկացված նրան՝ Ս. Աստվածածնից եւ Հովհաննես Մկրտչից հետո:

Ավելին, Հայ Եկեղեցու կենտրոնում, Մայր Տաճարի ներսում կան երեք խորաններ՝ կենտրոնականն անվանված է Ս. Աստվածամոր պատվին, ձախակողմյանը՝ Ս. Հովհաննես Մկրտչի, իսկ աջակողմյանը՝ Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի: Այս փաստը, միանշանակորեն, Հայ Եկեղեցու վերաբերմունքն է արտահայտում մեծ սրբի հանդեպ, մեր հոգեւոր կապվածությունը նրա գործի եւ հավատքի նկատմամբ:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, ընդունված կարգի համաձայն, այս օրվա առիթով Եկեղեցու խորանին ծառայող սպասավորներից թեկնածուներ են ընտրվում համայնքի

կողմից՝ սարկավագական աստիճանի արժանանալու: Առաջնորդանիստ եկեղեցիներում տեղի են ունենում դպրական ձեռնադրություններ, իսկ հոգևոր կրթական հաստատությունների սաները, համապատասխան դասընթացները լրացնելուց հետո, տեսչության կողմից ներկայացվում են Ամենայն Հայոց Հայրապետին՝ հոգևոր առաջին աստիճաններին արժանանալու համար, դպրությունից մինչև սարկավագություն:

Այսպիսով, Եկեղեցին քաջալերում է բոլոր նրանց ծառայությունը, որոնք նվիրել են իրենց Տիրոջ սեղանի սպասավորությանը: Քանզի, ինչպես ընթերցում ենք Նոր Կտակարանի Գործք Առաքելոց գրքում, հենց այս նպատակի համար ընտրվեցին առաջին յոթ սարկավագները, այդ թվում՝ Ս. Ստեփանոսը (Գործք Զ. 1-7):

Սիրելի հավատացյալներ, այսօր Հայ Եկեղեցում ընդունված ավանդույթի համաձայն սարկավագաց տոնն է: Մայր Աթոռում Պատարագից հետո բոլոր սարկավագները լուսարարապետ Սրբազան Հոր առաջնորդությամբ ընդունելության են արժանանում Հայոց Հայրապետի կողմից, ստանում փոքրիկ նվերներ, եւ, ամենակարեւորը, իրենց կոչմանը հավատարիմ լինելու պատգամ:

Պատմության ընթացքում Հայոց Եկեղեցում սարկավագների հետ կապված բազում գեղեցիկ ավանդույթներ են ձեւավորվել: Այդ ավանդույթների խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե քրիստոնեությունը որքան կարեւորություն է ընծայել սարկավագի պաշտոնին, ինչ պատասխանատվություն է նա կրում Եկեղեցու ծիսական կյանքում, ինչ դեր է վերապահված նրան համայնքի հոգեւոր կարիքները հոգալու, մանավանդ հովվական խնամք տրամադրելու առաքելության մեջ: Պետք է ասել, որ քրիստոնեության առաջին հինգ դարերում Եկեղեցում հովվական խնամքը, Եկեղեցու սոցիալական սպասավորությունը հիմնականում ընկած է եղել սարկավագների ուսերին: Հավանաբար դա է պատճառը, որ եկեղեցական ավանդության մեջ սարկավագին «հայր» տիտղոսն է տրվել, «հայր սարկավագ» են կոչել նրան: Ի դեպ մինչեւ Ի. դարասկիզբ Հայ Եկեղեցում գործում էր այս ավանդույթը, խորհրդային շրջանում այն կարծես մոռացության մատնվեց: Այսօր Հայոց Եկեղեցին այն վերականգնելու կարիք ունի, մանավանդ, որ ապրում ենք հոգեւոր վերազարթոնքի մի ժամանակաշրջան, երբ անհրաժեշտություն է զգացվում վերաիմաստավորելու այն հոգեւոր կոչումներն ու աստիճանները, որոնք կրում ենք մենք եւ որոնց համաձայն կոչված ենք վկայելու աշխարհին:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, այսօր, բնականաբար, հարց կարող է ծագել, թե ինչո՞ւ է Եկեղեցին այդքան մեծ ուշադրության արժանացրել Ս. Ստեփանոսին, արդյո՞ք միայն նրա համար, որ առաջին նահատակն է, թե՞ ավելի խորքային պատճառ կա, որն առաջին հայացքից այդքան էլ նկատելի չէ: Ի՞նչ է ուսուցանում մեզ Ս. Ստեփանոսի օրինակը, ինչ ենք սովորում նրա պատմությունից:

Թեեւ Ս. Ստեփանոսը աշակերտ չէր, սակայն աշակերտության ճշմարիտ օրինակ էր: Իմ խոնարհ համոզմամբ Եկեղեցին, Ս. Ստեփանոսի նահատակության հիշատակությունը սարկավագաց դասի տոնը դարձնելով, շատ կարեւոր պատգամներ է փոխանցում մեզ՝ հոգեւորականներիս եւ հավատացյալներիս: Այդ պատգամներից կցանկանայի

առանձնացնել երկուսը՝ ծառայություն եւ վկայություն, որոնք իրար շաղկապված են: Այս երկուսի միասնության միջոցով է արտահայտվում Եկեղեցու հովվական կյանքը, այս միջոցներով է Եկեղեցին հովվում: Մանավանդ այսօր ձեռնադրության առիթով կցանկանայի մեր նորընծաներին հիշեցնել, թե ի՜նչ է նշանակում լինել սարկավագ, ի՜նչ է նրանցից ակնկալում Եկեղեցին, հավատացյալների բազմությունը, ինչ պիտի տան նրանք աշխարհին:

Առաջինը՝ Եկեղեցին հիշեցնում է, թե ո՞րն է հոգեւորականի առաքելությունը. մենք կոչված ենք ծառայության կամ, ինչպես սարկավագ/դիակոն բառի իմաստն է հուշում, սպասավորության: Հոգեւորականը նախեւառաջ պիտի այդ մտածողությունն ունենա, որ ինքը կոչված է ծառայելու քրիստոնեական հավատքի տարածմանը, նվիրելու իր կյանքը փրկության վարդապետությանը, նա չունի անձնական կյանք, նրա կյանքն իրեն չի պատկանում, այլ՝ Եկեղեցուն: Ինչպես որ Հիսուսն ասաց իր երկրավոր սպասավորության ընթացքում. «Մարդու որդին չեկա ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու եւ իր անձը տալու որպէս փրկանք շատերի փոխարեն» (Մտթ. Ի. 28): Հոգեւորականը, հետեւաբար, Տիրոջ Խոսքի, Ավետարանական պատգամի սպասավորն է բառիս ամենալայն իմաստով: Այս ծառայությանը մկրտության խորհրդի միջոցով կոչված են նաեւ բոլոր քրիստոնյաները, ամեն մեկն իր ուժերի ներածին չափով:

Երկրորդ՝ ծառայելով վկայում ենք: Այդ ծառայությունը նաեւ վկայություն է, եւ դիմացինի համար վստահելի է այդ վկայությունն այնքանով, որքանով որ նվիրում կա այդ ծառայության հանդեպ, հավատք՝ դրա կարեւորության նկատմամբ:

Վաղ քրիստոնեական համայնքի մտածողության մեջ հավատքի քարոզչության հիմնական աղբյուր էր կենցաղավարությունը, անձնական օրինակը: Դեռեւս գոյություն չուներ որեւէ գրավոր երկ՝ Քրիստոսի կյանքի եւ գաղափարների մասին: Քարոզչությունը Եկեղեցու բանավոր ավանդության համաձայն էր իրականացվում, իբրեւ հավաստում դրա ճշմարտացիության՝ քրիստոնյաները ձգտում էին իրենց կյանքի օրինակով գրավել մարդկանց դեպի նոր հավատքը: Առաջին եկեղեցին ապրում էր մեկ ընտանիքի պես, իբրեւ մի մարմին, վկայում էր խոսքով եւ գործով, այդ վկայությունը տրվում էր թե՛ ներսիններին եւ թե՛ աշխարհին, թե՛ համայնքի անդամներին, թե՛ Եկեղեցուց դուրս գտնվողներին: Իզուր չէ, որ քրիստոնեության հետագա դարերի համար միշտ կատարելատիպ մնաց առաջին համայնքի օրինակը: Հետագայում շատերը քրիստոնեության վերածնունդը փորձեցին կապել առաջին համայնքի օրինակի վերականգնման հետ, կամ ոգեշնչման աղբյուր դարձրին այն իրենց հավատքի եւ բարեպաշտության համար:

Սիրելի նորընծաներ, սարկավագությունը հոգեւոր առաջին աստիճանն է: Այն որոշակի պարտականություններ է ենթադրում, որ պիտի խոնարհաբար իրականացնեք: Բայց, ամենակարեւորը, հիշեք, որ այդ պարտականություններն իրականացնելու միակ գրավականը հավատքն է ձեր կոչման հանդեպ, անկեղծությունը ձեր առաքելության նկատմամբ: Ձեր հավատարմությունը Եկեղեցու առաքելության հանդեպ այս պահից պիտի արտահայտվի, նախանձախնդրությունը որեւէ կապ չունի աստիճանի հետ, նա-

խանձախնդրությունն անկեղծության եւ նվիրումի արտահայտություն է: Ս. Ստեփանոսի նահատակության օրինակով սովորում ենք, թե ինչ է նշանակում լինել փոքրի մեջ հավատարիմ (հմմտ. Ղուկ. ԺԹ. 17): Չլիներ նրա օրինակը, միգուցե շատ քրիստոնյաներ՝ հալածանքների դաժանության վախից ազդված, հեռ կանգնեին իրենց հավատքից: Նա սովորեցնում է, որ կարեւոր չէ, թե ինչ ասպիճան ունես, կարեւորն այն ոգին է, այն հավատքի անկեղծությունը, որը մղում է քեզ այդ հանձնառությանը: Ահա նրա կյանքի օրինակով ենք հասկանում Հիսուսի այն խոսքերը, որ ամենափոքրը ամենամեծն է (հմմտ. Մատթ. Ի. 26): Ստեփանոսի ոգով պետք է ասպարեզ մտնենք՝ պատրաստ նույնիսկ նահատակվելու, եթե դրա անհրաժեշտությունն առաջանա: Իմ մաղթանքն է ձեզ, որ սիրով հանձն առնեք ձեր պարտականությունները, որպեսզի զգաք Քրիստոսի լուծի քաղցրությունը (հմմտ. Մատթ. ԺԱ. 30):

Սիրելի հավատացյալներ, դուք էլ աղոթեք այս երիտասարդների համար, նաեւ մեզ համար, որ հանձն առանք այս ձեռնադրությունը: Աղոթեք, որ հավատարիմ լինենք մեր կոչմանը, արդարացնենք այն սպասելիքները, որ ունեք մեզանից եւ որին կոչված ենք: Աշխարհը լի է գայթակղություններով եւ փորձություններով, օգնեք մեզ ձեր հավատով, ձեր մշտական ներկայությամբ: Մենք բոլորս կոչված ենք Ավետարանի գործին, փրկության վարդապետության իրագործմանը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեսեանդ. ամէն: